Հաստատում եմ
«Ադամյան դպրոցի» տնօրեն՝ Լ. Ադամյան
14.06.2023թ.

«Հետաքրքրաշարժ ֆրանսերեն» խմբակի ծրագիր
Միջին դպրոց /11-15 տարեկան/
Շաբաթական 2 ժամ, տարեկան 68 ժամ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Հետաքրքրաշարժ ֆրանսերեն» խմբակի ծրագիրը նախատեսված է միջին դպրոցի 11-15 տարիքային խմբի սովորողների համար, տարեկան 68 ժամաքանակով, որի շրջանակում սովորողը ֆրանսերենով պետք հասկանա ծանոթ, պարբերաբար հանդիպող թեմաներով բանավոր և գրավոր խոսքի հիմնական իմաստը, լեզվակիր երկրներում կարողանա կողմնորոշվել և շփվել առօրյա կենցաղային հաղորդակցական պարզ իրավիճակներում, ֆրանսերենով ներկայացնի և քննարկի որոշ իրավիճակներ, կայացնի որոշումներ , արտահայտի, հիմնավորի և պաշտպանի
ս

«Հետաքրքրաշարժ ֆրանսերեն» խմբակի գործունեությունը միջին դպրոցում հնարավորություն է տալիս կատարելու անհատական և խմբային, հետազոտական և նախագծային աշխատանքներներ, ցուցադրություններ, դերախաղեր, որոնք կապահովեն վերաբերմունքային և արժեհամակարգային բաղադրիչը, ինչպես նաև նպաստում է Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակությունների ձևավորմանը:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ծրագրում ընդգրկված թեմաները նպատակ ունեն սովորողի մոտ

ս ... զարգացնել Լեզուների իմացության եվրոպական շրջանակի (այսուհետ՝ ԼԻԵՇ)
ա A2-B1 մակարդակի կարողունակություններ՝ հաշվի առնելով
կ Հանրակրթության պետական չափորոշիչներով կոնկրետ կրթական
ե աստիճանի համար սահմանված վերջնարդյունքները,
տ ... արժևորել այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ ունեցած
ը հետաքրքրությունն ու հարգանքը:
... ձևավորել հաղորդակցական հմտություններ ու կարողություններ լեզվական
և գիտելիքների կիրառմամբ,
... ձևավորել ստեղծագործական և քննական մտածողության հմտություններ և
դ կարողություններ
ի ... ձևավորել բազմամշակույթ աշխարհում գործող անձ:

ԽՆԴԻՐՆԵՐԸ

ր
ո
2
ո

- գիտակցել բազմալեզու կրթության դերը այսօրվա տեխնոլոգիական դարաշրջանում,
- զարգացնել ունեցած ձեռքբերումների և սխալների հիման վրա սովորելու կարողությունները,
- սովորեցնել և հարստացնել քերականական իրողությունները՝ ուշադրություն դարձնելով գործնականում դրանց կիրառմանը
- ծանոթացնել, սովորեցնել աշխարհագրական իրողությունները ըստ տարիքային առանձնահատկության:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի բովանդակության յուրացման արդյունքում սովորողը կկարողանա՝

- լսել և հասկանալ ծանոթ թեմաներով հեռուստամեդիա հաղորդումների ընդհանուր բովանդակությունը,
- բանավոր վերարտադրել գրքի, ֆիլմի, տեսանյութի հիմնական բովանդակությունը և հայտնել տեսակետ, դիրքորոշում,
- կազմել կարճ տեղեկատվական, նկարագրական, վերլուծական տեքստեր իր փորձի, առօրյայի մասին՝ ներառելով տեղեկություններ, փաստարկներ,
- արտահայտել իր մտքերն ու տպավորությունները հանձնարարված իրավիճակի վերաբերյալ, գրավոր խոսքում՝ նամակագրություն, շարադրություն, զեկույց,
- համեմատել և համադրել տարբեր աղբյուրներից քաղված փաստերն ու տեղեկությունները,
- ստեղծել տեղեկատվական բնույթի պարզ տեքստեր՝ գովազդներ, պաստառներ, բուկլետներ,
- պատմել մայրենիի և ուսումնասիրվող լեզվի մշակույթի, կենցաղի ու տոների մասին՝ նշել նմանություններն ու տարբերությունները,
- ցուցաբերել հետաքրքրություն իր և ուսումնասիրվող երկրի տեսարժան վայրերի, խոհանոցների և սովորույթների հանդեպ,
- համեմատել իրերը, ներկայացնել նմանություններն ու տարբերությունները բառապաշարային և քերականական միավորներով:
- Ստեղծել տրված թեմայի շրջանակում երկխոսություն, հարցազրույց, ելույթ՝ բերելով համոզիչ փաստարկներ,

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ/ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Հ/Հ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ՆՊԱՏԱԿ	ԺԱՄԱՔԱՆԱԿ	ՆՇՈՒՄՆԵՐ
1.	Դեպի դպրոց	Հարստացնել թեմային բնորոշ բառապաշարը, նկարագրել դպրոցը, պատմել արձակուրդների մասին, արտահայտել իր տպավորությունը գիտելիքի օրվա վերաբերյալ, քերականական կանոնների ներմուծում: Վերհիշել գրենական պիտույքների անունները և կազմել երկխոսություն, ներկայացնել դասացուցակը և սիրած առարկան, մշակել վարքի կանոններ և հետևել դրանց::	6	Լսել և հասկանալ թեմայի մասին տեսանյութը, պարզ արտահայտություններով կազմել և ներկայացնել շատ կարճ երկխոսություն դպրոցի, իր երկրի կրթության համակարգի, և արձակուրդների մասին: Դերային խաղով ամրապնդել բառապաշարը և քերականական որոշ կանոններ, ներկայացնել ընկերոջը, խոսել նրա առօրյայից և լսել կարծիքներ: <u>**Նախագիծ**</u> – Իմ դասարանի առօրյան <u>**Նախագիծ**</u>-Իմ դասացուցակը
2.	Զբոսանք քաղաքում	Ծանոթացնել թեմային վերաբերող բառապաշարին և դրանում կիրառվող արտահայտություններին և քերականական կառույցներին, ձևավորել հոգատար վերաբերմունք զբոսանքի ընթացքում շրջակա միջավայրի հանդեպ, ծանոթացնել տրանսպորտի միջոցներին և դրանց հետ կիրռվող նախդիրներին, սովորեցնել o գ տ	8	Թվարկել Երևան քաղաքի թանգարանները, փողոցները, նշել հայտնի սրճարանները: <u>**Նախագիծ**</u>- մշակել քաղաքային տուրի նախագիծ:
3	Մեր խոհանոցը	Ներմուծել թեմային առնչվող բառապաշար, նկարագրել կենցաղային իրերը, խոհանոցի կահավորանքը, մթերքները, սովորեցնել սեղանի ձևավորումը և ծանոթացնել	8	Դերային խաղով ստեղծել համապատասխան իրավիճակ: Նմանակել «Եփող-թափողները» շոու նախագծին: Նախագիծ –

		սեղանից օգտվելու էթիկայի որոշ կանոններին:		Նկարել տեսանյութ «Իմ սիրած» ուտեստը վերնագրով:
4.	Խանութում	Հարստացնել թեմային բնորոշ բառապաշարը, ներկայացնել խանութի բաժինները համապատասխան բառապաշարով, ամրապնդել մասնակի հոդի կիրառությունը խոսքում, կիրառել քաղաքավարության մի քանի արտահայտություններ գնումներ կատարելիս:	10	Լսել և հասկանալ թեմայի մասին տեսանյութը, կատարել համապատասխան առաջադրանքը: Կազմել երկխոսություն, նկարագրել իրավիճակ ձեր առօրյա գնումներից: **Նախագիծ** – Մեր բակի խանութը /պաստառ, տեսանյութ, դերային խաղ/
5	Սրճարանում	Բառապաշարը հարստացնել թեմային բնորոշ նոր բառերով, քերականական կանոններով, խոսքում կիրառել դիմելաձևի մի քանի արտահայտություններ, կարողանալ պատվիրել սրճարանում, լսել ու հասկանալ մատուցողին, արտահայտել իր կարծիքը, նկարագրել իր նախընտրած ուտեստը:	8	Լսել երկխոսությունը և կատաարել առաջադրանքը, կազմել նմանատիպ երկխոսություն, դերային խաղով ներկայացնել փոքրիկ իրավիճակ սրճարանում **Նախագիծ** – գրել օրվա ճաշացանկ
6.	Բժշկի մոտ	Բառապաշարը հարստացնել թեմային բնորոշ նոր բառերով, քերականական կանոններով, սովորել մարմնի մասերը, որոշ հիվանդությունների նկարագրությունը, հասկանալ հիվանդի գանգատները և բժշկի խորհուրդները	10	Կազմել երկխոսություն, կիրառել բառապաշարը խոսքում, դերային խաղով ներկայացնել իրավիճակ բժշկի սենյակում: **Նախագիծ** – Խորհուրդ հիվանդին /պաստառ, վիդեո, իրավիճակ/: Լսել և հասկանալ առողջ ապրելակերպին և վնասակար սովորություններին վերաբերող մեդիա հաղորդումների հիմնական բովանդակությունը:

7	Սպորտն իմ կյանքում	Ընդլայնել սպորտին վերաբերող բառապաշարը մարզահագուստ և պարագաներ), Հարստացնել բառապաշարը խոսելու Ֆրանսիայում և Հայաստանում տարածված մարզաձևերի և սիրված մարզիկների մասին: Խթանել առողջ ապրելակերպի և կամային հատկանիշների ձևավորման համար սպորտի դերի արժևորումը:	10	Լսել և հասկանալ մարզական լուրերի հիմնական բովանդակությունը, համառոտ պատմել սեփական և ուսումնասիրվող լեզվի երկրի մարզաձևերի, մարզիկների, մարզական իրադարձությունների մասին, կատարել կարճ, պարզ, տեղեկատվական և նկարագրական բնույթի գրառումներ հայտնի և սիրված մարզիկների և մարզաձևերի մասին՝ արտահայտելով սեփական վերաբերմունքը: Պատրաստել սահիկաշար սիրած սպորտաձևի կամ մարզիկի մասին, **Նախագիծ** - դերային խաղով ներկայանալ որպես սպորտային մեկնաբան:
8	Զբոսանք կենդանաբանական այգում	Զարգացնել բանավոր և գրավոր խոսքը թեմայի շրջանակում, ընդլայնել կենդանիներ թեմային առնչվող բառապաշարը և կառույցները, ձևավորել հոգատար վերաբերմունք կենդանիների հանդեպ: Արժևորել ընտանի և վայրի կենդանիների դերը մեր կյանքում:	8	Լսել և հասկանալ ընտանի և վայրի կենդանիներ թեմաներով պարզ, ուսումնական հեռուստահաղորդումներ ի հիմնական բովանդակությունը, նկարագրել ընտանի և վայրի կենդանիներին, նրանց ապրելավայրերը, սնունդը, պարզ արտահայտություններով վարել շատ կարճ երկխոսություն կենդանիների, նրանց ապրելավայրի, պաշտպանության մասին: Գրել շարադրություն սիրած կենդանու մասին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ, ՀՂՈՒՄՆԵՐ

անրակրթական ուսումնական հաստատություններում «Օտար լեզուներ» բնագավառի առարկայական չափորոշիչ:

Adeline Vicher – Grammaire progressive du français pour les adolescents, CLE international
Claire Miquel - Vite et bien 1, 2, méthode rapide pour adultes, CLE international
Colette Samson – Amis et compagnie 1, 2, 3 , cahier d'activité, CLE international
Colette Samson – Amis et compagnie 1,2,3, Méthode de français, CLE international
Sylvie Schmitt – Vocabulaire progressif du français pour les adolescents, CLE international

Խմբավար՝ Փիրուզա Սարգսյան

Apprendre le français
Vocabulaire progressif du français
Vocabulaire progressif du français
Languages/
Москва, Просвещение 2017